

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Հայաստանի Հանրապետության 2003 թվականի 18 ապրիլի քրեական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 190-րդ հոդվածի 5-րդ մասում «329-րդ» բառից հետո լրացնել «329.1-րդ» բառը:

Հոդված 2. Օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասից հանել «քաղաքական» բառը:

Հոդված 3. Օրենսգիրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 329.1-րդ հոդվածով.

«Հոդված 329.1. Անօրինական միգրացիայի կազմակերպումը

1. Օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի Հայաստանի Հանրապետություն մուտքը, Հայաստանի Հանրապետությունում գտնվելը կամ Հայաստանի Հանրապետության տարածքով տարանցումը (տեղափոխումը) շահադիտական նպատակով կազմակերպելը, որը կատարվել է մուտքի, գտնվելու կամ տարանցման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով կամ մուտքի, գտնվելու կամ տարանցման պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթղթեր կամ կեղծ տեղեկություններ ներկայացնելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացու, Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող օտարերկրյա քաղաքացու կամ քաղաքացիություն չունեցող անձի՝ Հայաստանի Հանրապետությունից ելքը, օտարերկրյա պետություն մուտքը կամ օտարերկրյա պետությունում գտնվելը շահադիտական նպատակով կազմակերպելը, որը կատարվել է ելքի, մուտքի կամ գտնվելու համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգը խախտելով կամ ելքի, մուտքի կամ գտնվելու պատշաճ թույլտվություն ստանալու համար կեղծ փաստաթղթեր կամ կեղծ տեղեկություններ ներկայացնելով՝

պատժվում է տուգանքով՝ նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկից երկուհարյուրապատիկի չափով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը երեք տարի ժամկետով:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքները, որոնք կատարվել են՝

1) երկու կամ ավելի անձանց անօրինական միգրացիան կազմակերպելով.

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ.

3) մարդու կյանքի կամ առողջության համար վտանգավոր կամ անձի պատիվն ու արժանապատվությունը նվաստացնող պայմաններում.

4) պաշտոնական դիրքն օգտագործելով՝

պատժվում է ազատազրկմամբ երեքից ութ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա, որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ առանց դրա:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՐԵԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ՝ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՍԲ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ
ՊԱՏՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՎԱԾ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

h/h	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Գագիկ Զհանգիրյան	1. Առաջարկվել է Նախագծի հիմնավորման մեջ հստակեցնել Քրեական օրենսգրքի 329, 132-րդ հոդվածների կապը նախագծի 329.1-րդ հոդվածի հետ՝ բացառելու համար պրակտիկայում այդ արարքների որակման հետ կապված խնդիրները: Հստակեցնել, թե Քրեական օրենսգրքի 329-րդ և Նախագծի 329.1-րդ հոդվածների սուբյեկտները ովքեր կարող են լինել: 2. Առաջարկվել է խմբագրել Նախագծի 329.1-րդ հոդվածի տեքստը՝ երրորդ մասի 1-ին կետից հանելով «նկատմամբ» բառը և, ըստ այդմ, խմբագրել:	Ընդունվել է: Ընդունվել է:	Հիմնավորման մեջ կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:
2.	ՀՀ կառավարություն	1. Խմբագրել Նախագծի 329.1-րդ հոդվածի տեքստը՝ երրորդ մասի «գործողությունը, որը կատարվել է» բառերը փոխարինելով «արարքները, որոնք կատարվել են» բառերով: 2. Նախագծում ավելացնել, որ Քրեական օրենսգրքի 329-րդ հոդվածի 3-րդ մասից անհրաժեշտ է հանել «քաղաքական» բառը:	Ընդունվել է: Ընդունվել է:	Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն: